Արձանագրություն N 2

<<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-18/10>> ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի գ. Վարդենիսի դպրոցի կառուցման մնացորդային աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

28.08.2018թ.
Ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Մ. Քյուրքչյան
Հանձնաժողովի անդամներ ՝	Ռ. Եղիազարյան
	Գ. Խորենյան
	Ա. Գրիգորյան
	Գ. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան

1. <<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-18/10>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի մասին

(Մ. Քյուրքչյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

1) Գնման գործընթացն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

2) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2018 թվականի օգոստոսի 20-ին, ժամը 11:30-ին:

3) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ	*Մասնակցի անվանումը*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<Ռադիկ Շին>> ՍՊԸ	37 500 000	-	37 500 000
2	<<Արտյոմ Մինասյան>> ՍՊԸ և <<ԱՇԿԱՐ>> ՍՊԸ կոնսորցիում	45 536 217	9 107 243	54 643 460
3	<<Աբակ>> ՍՊԸ	49 500 000	9 900 000	59 400 000
4	<<ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ>> ՍՊԸ	50 283 250	10 056 650	60 339 900
5	<<Բիդեք>> ՍՊԸ	51 875 000	10 375 000	62 250 000
6	<<Շինկարկաս>> ՍՊԸ	57 000 000	11 400 000	68 400 000

4) Ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը կասեցրել է 20.08.2018թ նիստը և որոշել հաջորդ նիստը հրավիրել մինչև հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5) Ներկայացված հայտերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ

- <<Ռադիկ Շին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին:

- <<Արտյոմ Մինասյան>> ՍՊԸ-ի և <<ԱՇԿԱՐ>> ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում.

ա) բացակայում է ընկերությունների համատեղ գործունեության պայմանագրի պատճենը,

բ) Հավելված 1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին,

գ) 1-4 հավելվածներում հնարավոր չէ պարզել <<Արտյոմ Մինասյան>> ՍՊԸ-ի տնօրենի էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու հանգամանքը (էլեկտրոնային ստորագրությունն ակտիվ չէ): Էլեկտրոնային ստորագրությունների առկայությունը պարզելու համար ներկայացնել տեղեկանք առ այն, որ <<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-18/10>> ծածկագրով գնման ընթացակարգին Կոնսորցիումի կողմից ներկայացված 1-4 հավելվածները հաստատված են նաև <<Արտյոմ Մինասյան>> ՍՊԸ-ի տնօրենի կողմից: Անհրաժեշտ է նաև, որ պահանջվող տեղեկանքը հաստատված լինի Կոնսորցիումի տնօրենների էլեկտրոնային թվային ստորագրություններով (որոնք ակտիվ կլինեն ստորագրված ֆայլում և կպարունակեն հասանելի ամբողջական տեղեկատվություն դրված ստորագրությունների մասին) և էլեկտրոնային թվային ստորագրություններով հաստատված բնօրինակ տարբերակով ներկայացնել գնահատող հանձնաժողովին (այլ ոչ թե սկանավորված տեսքով):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջը՝ գնահատող հանձնաժողովը 22.08.2018թ. նիստի արդյունքում որոշել է ծանուցել վերը նշված կազմակերպություններին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները (հակառակ դեպքում հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն) և հաջորդ նիստը հրավիրել 24.08.2018թ.:

6) 22.08.2018թ. ծանուցվել է <<Ռադիկ Շին>> ՍՊԸ-ին և <<Արտյոմ Մինասյան>> և <<ԱՇԿԱՐ>> ՍՊԸ-ների կոնսորցիումին (այսուհետ՝ Կոնսորցիում) մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

7) 22.08.2018թ. դրությամբ <<Ռադիկ Շին>> ՍՊԸ-ի կողմից շտկվել է հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

8) 22.08.2018թ. դրությամբ Կոնսորցիումի կողմից որպես անհամապատասխանությունների շտկում ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները ներկայացվում են ստորև.

Հ/Հ	Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն	Արձանագրված անհամապատասխանության ուղղում
1.	Բացակայում է ընկերությունների համատեղ գործունեության պայմանագրի պատճենը:	Ներկայացված համատեղ գործունեության պայմանագիրը կազմված է 18.08.2018թ. և կողմերի կողմից վավերացված է 22.08.2018թ., այնինչ Կոնսորցիումի հայտը armeps համակարգ է մուտքագրվել 16.08.2018թ.: Ստացվում է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Կոնսորցիումն իրավասություն չի ունեցել այն ստորագրելու:

2.	Հավելված 1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին:	Ներկայացվել է Հավելված 1-ի նոր տարբերակ, որի մեջ նշված չեն Կոնսորցիումի 2-րդ անդամի հասցեն և բանկային վավերապայմանները:
3.	Ներկայացված 1-4 հավելվածներում հնարավոր չէ պարզել <<Արտյոմ Մինասյան>> ՍՊԸ-ի տնօրենի էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու հանգամանքը (էլեկտրոնային ստորագրությունն ակտիվ չէ), որի համար պահանջվել է ներկայացնել տեղեկանք առ այն, որ <<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-18/10>> ծածկագրով գնման ընթացակարգին Կոնսորցիումի կողմից ներկայացված 1-4 հավելվածները հաստատված են նաև <<Արտյոմ Մինասյան>> ՍՊԸ-ի տնօրենի կողմից:	Պահանջվող տեղեկանքի փոխարեն Կոնսորցիումի կողմից ներկայացվել են կազմակերպությունների տնօրենների էլեկտրոնային ստորագրություններով 22.08.2018թ. դրությամբ հաստատված 1-4 հավելվածների նոր տարբերակներ (այդ թվում գնային առաջարկ):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կոնսորցիումի հայտը մերժվում է՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

9) Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ 24.08.2018թ. նիստի արդյունքում հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը, ծանուցել հրավերի պահանջներին բավարարող գնահատված մասնակիցներին՝ <<Ռադիկ Շին>>, <<Աբակ>>, <<ՎԱՀՐԱԴՅԱՆՇԻՆ>>, <<Բիդեք>>, <<Շինկարկաս>> ՍՊԸ-ներին առաջարկված գների նվազեցման նպատակով կազմակերպվող բանակցությունների մասին, որը տեղի կունենա 2018 թվականի օգոստոսի 28-ին ժամը 11:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների բաժնում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ հասցեում):

10) 28.08.2018թ. հրավիրված բանակցություններին մասնակցել և գնային առաջարկ են ներկայացրել (կցվում է) հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<Ռադիկ Շին>> ՍՊԸ	37 500 000	-	37 500 000
2	<<Աբակ>> ՍՊԸ	48 800 000	9 760 000	58 560 000
3	<<Շինկարկաս>> ՍՊԸ	56 000 000	11 200 000	67 200 000

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. Տեղեկություններ <<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-18/10>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Մ. Քյուրքչյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից

էլեկտրոնային համակարգի միջոցով հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ.

Զբաղեցրած տեղը	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	<<Ռադիկ Շին>> ՍՊԸ	բավարար
2	<<Աբակ>> ՍՊԸ	բավարար
3	<<ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ>> ՍՊԸ	բավարար
4	<<Բիդեք>> ՍՊԸ	բավարար
5	<<Շինկարկաս>> ՍՊԸ	բավարար
-	<<Արտյոմ Մինասյան>> ՍՊԸ և <<ԱՇԿԱՐ>> ՍՊԸ կոնսորցիում	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Մ. Քյուրքչյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց

- Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

- Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. <<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-18/10>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Մ. Քյուրքչյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն

աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ. Քյուրքչյան

Անդամ՝ ---------- Ռ. Եղիազարյան

---------- Գ. Խորենյան

---------- Ա. Գրիգորյան

---------- Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան

ՆՎԱԶԵՑՎԱԾ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

<<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-18/10>> ծածկագրով գնման ընթացակարգի

Առաջարկված գների նվազեցման նպատակով կազմակերպված բանակցությունների արդյունքում <<Ռադիկ Շին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացվում է հետևյալ նվազեցված գնային առաջարկը.

ՀՀ դրամ

Աշխատանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4=2+3
ՀՀ Արագածոտնի մարզի գ. Վարդենիսի դպրոցի կառուցման մնացորդային աշխատանքներ	37.500.000 երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար		37.500.000 երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար

/<<Ռադիկ Շին>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Դավթյան/

ստորագրությունը

Կ. Տ.

ՆՎԱԶԵՑՎԱԾ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

<<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-18/10>> ծածկագրով գնման ընթացակարգի

Առաջարկված գների նվազեցման նպատակով կազմակերպված բանակցությունների արդյունքում <<Աբակ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացվում է հետևյալ նվազեցված գնային առաջարկը.

ՀՀ դրամ

Աշխատանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4=2+3*
ՀՀ Արագածոտնի մարզի գ. Վարդենիսի դպրոցի կառուցման մնացորդային աշխատանքներ	48800000 քառասունութ միլիոն ութ հարյուր հազար	9760000 ինը միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար	58560000 հիսունութ միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար

<<Աբակ>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Սարգսյան

ստորագրությունը

Կ. Տ.

«ԱԲԱԿ» «АБАК» 01222825

ՆՎԱՋԵՑՎԱԾ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

<<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-18/10>> ծածկագրով գնման ընթացակարգի

Առաջարկված գների նվազեցման նպատակով կազմակերպված բանակցությունների արդյունքում <<Շինկարկաս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացվում է հետևյալ նվազեցված գնային առաջարկը.

ՀՀ դրամ

Աշխատանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4=2+3
ՀՀ Արագածոտնի մարզի գ. Վարդենիսի դպրոցի կառուցման մնացորդային աշխատանքներ	56.000.000 (Հիսունվեց միլիոն)	11.200.000 (Տասնմեկ միլիոն երկու հարյուր հազար)	67.200.000 (Վաթսունյոթ միլիոն երկու հարյուր հազար)

<<Շինկարկաս>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Հարությունյան

ստորագրությունը

Կ. S.